02 հունիսի 2026թ.

ՀՏԶՀ • ATDF

«ԱՐԱՄԵ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի գործընկեր,

Ձեզ եմ ուղարկում ՀՏԶՀ-ՎՁԱՓ-ՀՄԱ-ԾՁԲ-2025/2 ծածկագրով «ՀՀ տարբեր մարզերում մի շարք դպրոցների վերանորոգման համար շենքերի չափագրման, ծավալաթերթ/թերությունների ակտերի և նախահաշիվների փաստաթղթերի մշակման» խորհրդատվական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին թիվ 1 համաձայնագրի նախագիծը:

Խնդրում եմ Ձեզ լրացնել Ձեր ընկերության ռեկվիզիտները, կնքել, ստորագրել և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին ներկայացնել հաստատված Համաձայնագրի երկու օրինակը:

Վերոնշյալ փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել գործադիր տնօրենին ուղղված գրությամբ՝ սույն ծանուցումը ստանալու պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 23.06.2026թ. ներառյալ):

Հարգանքով՝ Մ. Մովսիսյան